Նարեկ Մուրադյան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բանալի բառեր – Անդրկովկասյան սեյմ, Խորհրդային Ռուսաստան, համագումար, հանձնաժողով, Միութենական խորհուրդ, Կովկասյան բյուրո, Ալեքսանդր Մյասնիկյան, Անդրկովկասյան դաշնություն:

Ռուսաստանում ցարական ինքնակալության տապալումից հետո 1917 թ. մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (Օզակոմ), որը փոխարինեց Կովկասի փոխարքայությանը և կազմված էր չորրորդ պետական դումայի կովկասի ներկայացուցիչներից: Օզակոմին փոխարինելու եկավ 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված Անդրկովկասյան կոմիսարիատը վրաց մենշևիկ Ե. Գեգեչկորիի գլխավորությամբ[1]: Կոմիսարիատի կազմի մեջ մտնում էին 3 վրացի, 3 մահմեդական, 3 հայ (ֆինանսների կոմիսար՝ Խ. Կարճիկյան, պարենավորման կոմիսար՝ Ա. Տեր-Ղազարյան և խնամատարության կոմիսար՝ Հ. Օհանջանյան) և 2 ռուս: Անդրկովկասյան կոմիսարիատը ժամանակավորապես ստանձնեց երկրամասի կառավարումը: Գործադիր մարմնից զատ որոշվեց ստեղծել նաև օրենսդիր մարմին: 1918 թ. փետրվարին բազմակուսակցական սկզբունքով ձևավորվեց Անդրկովկասի սեյմը (խորհրդարան):

Չնայած Անդրկովկասյան կոմիսարիատը համարվում էր երկրամասի կառավարական «միացյալ» օրգան՝ նրանում փաստացի միասնություն չկար: Կոմիսարիատի գործունեությունն ընթանում էր ազգային կուսակցությունների չափազանց սրված մթնոլորտում, քանի որ կուսակցություններից յուրաքանչյուրը ուներ իր նպատակներն ու ձգտումները: Անդրկովկասյան կոմիսարիատը 1918 թ. փետրվարի 10-ին գումարեց նիստ, Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորներից և կուսակցությունների ներկայացուցիչներից:

Սեյմը լուծարեց կոմիսարիատը և1918 մարտին Անդրկովկասն անջատ հռչակեց Ռուսաստանից: Կարճ ժամանակ անց՝ ապրիլի 9-ին (22), ձևավորեց Անդրկովկասյան Դեմոկրատիվ Ֆեդերատիվ հանրապետությունը և դարձավ այդ պետության բարձրագույն մարմինը: Խորհրդային Ռուսաստանը, բնականաբար, չճանաչեց այս հանրապետությունը, իսկ Թուրքիան, ընդհակառակը, ապրիլի 28-ին ճանաչեց այն: Այս քայլը միանգամայն հասկանալի է, քանի որ Թուրքիայի շահերից էր բխում երկրամասը անջատել Ռուսաստանից:

Երկրամասում հակասությունները այն աստիճան էին սրվել, որ անիմաստ էր Սեյմի գոյությունը: Այդ պատճառով էլ 1918 թ. մայիսի 26-28-ը հաջորդաբար հռչակվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունները:

[1] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան 1999, էջ 26:

ները: Անդրկովկասյան նորանկախ երեք հանրապետությունների ազգամիջյան հարաբերությունները ավելի սուր բնույթ ստացան և նույնիսկ վերաճեցին միմյանց միջև պատերազմի: Հարցի հիմնական էությունն ու բարդությունը այն էր, որ գոյություն ունեին հայ-վրացական, հայ-ադրբեջանական և վրաց-ադրբեջանական սահմանային խնդիրներ: Այս պայմաններում, բնականաբար, բոլոր երեք հանրապետությունները հույսեր էին կապում Անդրկովկասյան դաշնության կազմավորման հետ, որպեսզի կարողանան կարգավորել իրենց տարածքային հարցերը:

1920 թ. սկզբին Անդրկովկասում տեղի ունեցան էական փոփոխություններ՝ կապված տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի դերի աշխուժացման հետ: Ռուսաստանը իր կարևորագույն խնդիրն էր համարում խորհրդային իշխանության ամրապնդումը, որին հասնելու համար անհրաժեշտ էր, բնականաբար, որ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի միջև լիներ սերտ համագործակցություն և հաստատվեր դաշնային փոխհարաբերություն: Երեք հանրապետությունները, սակայն, ունեին իրենց հուզող հարցերը և, բնականաբար, ձգտում էին հասնել այդ հարցերի լուծմանը: Հանրապետությունների միջև առկա վիճելի հարցերը և տարածայնությունները հարթելու համար անհրաժեշտ էր ղեկավար մարմնի առկայություն: Խորհրդային իշխանության ամրապնդման ուղղությամբ առաջին քայլը Անդրբեջանի խորհրդայնացումն էր, որին հաջորդեցին Վրաստանը և Հայաստանը: Այսպիսով, Անդրկովկասի Խորհրդային հանրապետությունները մտան ռուսական բոլշևիկյան ուղեծրի շրջանակ, որով և նրանց հետագա գոյությունն ու զարգացման գործընթացները ստացան նոր բնույթ:

Մասնավորապես Վրաստանի խորհրդայնացումից հետո սկսվեցին երկրամասի միավորման նախապատրաստական աշխատանքները: 1921 թ. ապրիլի 11-ին Բաքվի խորհրդի ընդլայնված նիստը Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի զեկուցումներից հետո առաջին անգամ որոշում ընդունեց Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման մասին: 1921 թ. ապրիլի 14-ին Լենինը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության ընկեր կոմունիստներին» ուղղած նամակում հույս էր հայտնում, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որն անհնարին էր բուրժուական հասարակարգում[1]:

1921 թ. ապրիլի 16-ին երեք հանրապետությունների միջև ստորագրվում է համաձայնագիր Անդրկովկասի երկաթուղիները միավորելու մասին: Հունիսի 2-ին նույնպիսի համաձայնագիր արտաքին առևտրի վերաբերյալ:

1921 թ. հուլիսի 3-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի միացյալ պլենումն ընդունեց «Վրաստանում և Անդրկովկասում կոմունիզմի հերթական խնդիրների մասին» բանաձևը, որտեղ նշված էր.

1. Հաստատել Անդրկովկասի հանրապետությունների կյանքում անկախության անցկացման անհրաժեշտությունը:

[1] Տե՛ս Լենին Վ. Ի., ԵԼԺ հ 43, էջ 246-248:

2. Փոխադարձ ռազմական և տնտեսական աջակցությունը հաշվի առնելով՝ Ռուսաստանի հետ կնքել ռազմական, առևտրական և տնտեսա-ֆինանսական համաձայնագիր կամավորության սկզբունքներով:

Անդրֆեդերացիայի ձևավորման ընթացքում մեծ դեր խաղաց 1921թ. հուլիսի 6-ին Թիֆլիսի կուսկազմակերպության ընդհանուր ժողովում Ստալինի զեկուցումը, որտեղ նա նշում էր, որ Վրաստանի և մյուս հանրապետությունների մեկուսացված գոյությունը կապիտալիստական շրջապատման պայմաններում ռազմական և տնտեսական տեսակետից լիովին անիմաստ է: Նա կարևոր էր համարում հանրապետությունների փոխադարձ օգնությունը միմյանց՝ մատնանշելով, որ, օրինակ, Վրաստանը չի կարող գոյատևել առանց ռուսական հացի[1]:

Անդրկովկասի միավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ նաև 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցում էր երեք հանրապետությունների կուսակցական ակտիվը: Ծ. Էլիավան և Ալեքսանդր Մյասնիկյանը պլենիումին ներկայացրեցին մի բանաձև, ըստ որի «անդրկովկասյան հանրապետությունների անջատ քաղաքական գոյությունը նրանց թուլացնում է կապիտալիստական երկրների առջև և նրանց քաղաքական սերտ միությունը կծառայի ամուռ երաշխիք արտաքին հակահեղափոխական ուժերի կողմից հարձակման դեպքում և արդյունքում Մերձավոր Արևելքում խորհրդային իշխանությունը կամրապնդվի»[2]: Ըստ այդ բանաձևի՝ այն նպաստելու էր հանրապետությունների տնտեսական միավորմանը և ամրապնդելու էր խորհրդային իշխանությունը: Այս պայմաններում, բնականաբար, պլենումը անհետաձգելի էր համարում ռազմական և տնտեսական համակարգերի միավորումը, ինչպես նաև ֆեդերատիվ դաշինքի կնքումը: Այս ծրագրի իրականացման համար պլենումը որոշեց ստեղծել երկրամասի վարչաքաղաքական կենտրոնական մարմին՝ Միութենական խորհուրդ: Այդ մարմնի գործունեությանն ուղղված նախագծի մշակման համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Էլիավա (նախագահ), Լեգրան, Լուկաշին, Եգորով, Էֆենդիև (անդամներ) կազմով[3]: Կովկասյան բյուրոյի պլենիումի արդյունքները քննարկվեցին Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1921 թ. նոյեմբերի 14-ին կայացած նիստում: Այստեղ զեկուցումով հանդես եկավ Ալ. Մյասնիկյանը՝ առաջ քաշելով Անդրոկվասի հանրապետությունների միություն ստեղծելու կենսագործման անհրաժեշտությունը:

1921 թվականի նոյեմբերի 27-ին ՀԿԲԿ կենտկոմի և Երևանի կոմիտեի ընդհանուր ժողովը որոշում է ընդունում անդրդաշնության կազմակերպման մասին:

1921 թ. նոյեմբերին Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց 3 հանրապետությունները ֆեդերատիվ հիմունքներով միավորելու մասին: Նոյեմբերի 29-ին Ռուսաստանի կուսկենտկոմը հաստատեց Լենինի նախագիծը: Փաստորեն Լիազոր կոնֆերանսը հռչակեց պետահիրավական նոր միավոր՝ Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն: Այսուհետև

[1] Տե՛ս Ստալին Ի., Երկեր, հ. 5, Երևան, 1948, էջ 98-111:
[2] Տե՛ս Ալ. Մյասնիկյան., Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 369:
[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Եր., 1921, նոյեմբերի 16, թ. 223:

երեք հանրապետությունները մտնում էին սերտ ռազմական, քաղաքական և տնտեսական միության մեջ:

Անդրկովկասի հանրապետությունների դաշնության հարցը քննարկվեց նաև Մոսկվայում: 1921 թ. նոյեմբերի 29-ին ՌԿ (բ) Կ կենտկոմի քաղբյուրոն միաձայն հաստատեց Լենինի ներկայացրած բանաձևը՝ միավորումը համարելով «սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման ենթակա իրագործմանը»[1]:

1921 թ. դեկտեմբերի 2-ին Ս. Կիրովի զեկուցումից հետո Բաքվի խորհուրդը ևս բանաձև ընդունեց ֆեդերացիայի անհապաղ ստեղծման օգտին[2]: Մի քանի օր անց՝ նոդեկտեմբերի 5-ին, Կիրովը Վրաստանի արհմիությունների պլենումում շեշտեց, որ 3 հանրապետությունների միջև կան հսկայական խնդիրներ, որոնք պետք է և կարելի է լուծել «միայն համատեղ»[3]:

1921 թ. դեկտեմբերի 7-ին գումարվեց Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների երրորդ կոնֆերանսը: Կոնֆերանսը հավանություն տվեց Ալ. Մյասնիկյանի և Ծ. Էլիավայի մշակած բանաձևին: Բանաձևում շեշտվում էր, որ դաշնության միավորմամբ ավարտվում է Անդրկովկասի ժողովուրդների համար «ազգամիջյան պայքարի երկարատև և ծանր շրջանը» և հաստատվում է «ամուր և անխախտ հաշտություն»: Հայաստանի Կոմկուսի կենտկոմի քարոզչական բաժինը մշակեց «Թե ինչու է մեզ հարկավոր ֆեդերացիան» թեզիսը, որտեղ նշվում էր, որ Անդրկովկասը միշտ էլ եղել է մի տնտեսական ամբողջություն, քանզի Ադրբեջանը առանց Հայաստանի արոտավայրերի, Հայաստանն առանց Բաքվի նավթի, Վրաստանն առանց Նախիջևանի աղի և բոլորն առանց Բաթումի ապրել չեն կարող:

1922 թ. հունվարի 26-29-ը տեղի ունեցած Հայաստանի Կոմկուսի առաջին համագումարում Մյասնիկյանը հանդես եկավ «Խորհրդային շինարարության և անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի մասին» զեկուցմամբ[4]: Մյասնիկյանը նշում էր ստեղծվելիք դաշնության քաղաքական առավելությունները, որոնք կհանգեցնեին ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորմանը:

1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը կայացավ Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: Այստեղ զեկույցով հանդես եկավ Մռավյանը, որ ամփոփելով Անդրկովկասի դաշնության ստեղծման անցած ուղու համառոտ պատմությունը և այդ առիթով արված քայլերը, անհրաժեշտ համարեց դաշնության ստեղծումը, ինչը կնպաստեր նաև արտաքին և ներքին վտանգներից պաշտպանվելուն, ինչպես նաև երկրամասի տնտեսական կյանքը վերականգնելուն: Համագումարը ընդունեց բանաձև, որով նորընտիր Կենտգործկոմին հրահանգվում էր քայլեր ձեռնարկել ֆեդերացիան արագ իրագործելու համար[5]:

Հանրապետություններում կայացած համագումարներին հաջորդեց և կատարված աշխատանքներն ամփոփեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1922 թ. փետրվարի 18-22-

---

[1] Տե՛ս Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 44, էջ 305:
[2] Տե՛ս ՀՔ ԿՓ ԿՊԱ, ֆ 1022, ց. 5. գ. 222, թ 166
[3] Образование СССР, М, 1949, с., 284-286.
[4] Տե՛ս ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թթ 18-23:
[5] Տե՛ս ՀՍԽՀ խորհուրդների Ա համագումար, էջ 119-120:

ը: Տեղի ունեցան առաջին լուրջ տեղաշարժերը Անդրկովկասյան դաշնության ստեղծման վերաբերյալ, Կովկասյան բյուրոյին փոխարինելու եկավ ՌԿ (բ) Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտեն: Կոմիտեի առաջին նիստում՝ փետրվարի 23-ին, քննարկվեց Անդրկովկասի դաշնության անհապաղ ստեղծման հարցը: Անդրկովկասի երկրամասային կոմիտեն հարցի վերջնական լուծման համար որոշեց հրավիրել հանրապետությունների կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանս[1]: Անդրկովկասյան հանրապետությունների լիազոր կոնֆերանսը կայացավ 1922 թ. մարտի 11-12-ը Թիֆլիսում: Կոնֆերանսում Անդրկովկասի ֆեդերացիայի ստեղծման քաղաքական խնդիրների միավորման նշանակության մասին զեկուցեց Մախարաձեն: Նա առաջ քաշեց այն կարծիքը, որ «առանց ֆեդերացիայի ստեղծման այլևս գոյատևել չեն կարող, անհնարին է ամուր խորհրդային իշխանության գոյությունը առանց միավորման»: Արդեն մարտի 12-ին Լիազոր կոնֆերանսը ընդունեց Անդրկովկասի դաշնության միութենական պայմանագիրը և ԲՏԽ-ի կանոնադրությունը: Միութենական խորհուրդը գործում էր 3-ի նախագահությամբ՝ Հայաստանից՝ Ալեքսանդր Մյասնիկյան, Վրաստանից՝ Բուդու Մդիվանի, Ադրբեջանից՝ Նարիման Նարիմանով: Միութենական խորհրդի իրավասությունը տարածվում էր ռազմական, ֆինանսական, արտաքին, հաղորդակցության, կապի գործերի և հակահեղափոխության դեմ պայքարի ոլորտների վրա: Լիազոր կոնֆերանսը ըստ էության հռչակեց նոր պետահիրավական միավոր՝ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների ֆեդերատիվ Միություն:

1922 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում տեղի ունեցավ Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը: Համագումարը թեթևակի փոխեց Անդրֆեդերացիայի անվանումը. ոչ թե երեք հանրապետությունների դաշնային միություն, այլ ընդհանուր մեկ դաշնային հանրապետություն: Այսուհետև, Վրաստանը, Հայաստանը Ադրբեջանը միավորվում էին Անդրդաշնության մեջ և կորցնում ինքնուրույնությունը ու անկախությունը: Այս համագումարում ընդունվեց նաև Անդրֆեդերացիայի սահմանադրությունը: Այսպիսով, Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը միայն ձևական առումով էին մնում ինքնիշխան հանրապետություններ՝ իրենց կուսակցություններով և կառավարություններով:

Անդրկովկասյան դաշնության ստեղծման նպատակը, իհարկե, նրա կազմի մեջ մտած հանրապետություններին անկախությունից զրկելն էր, հեշտ կառավարելի դարձնելը, սակայն, մյուս կողմից, այն կարգավորում էր երեք հանրապետությունների միջև փոխհարաբերությունները, լուծում նրանց միջև ծագած խնդիրները, բնականաբար այս ամենը տեղի էր ունենում Խորհրդային Ռուսաստանի վերադաս դերակատարությամբ: Անդրֆեդերացիայի ստեղծումը ամբողջությամբ չլուծեց և չկարգավորեց միջհանրապետական և միջազգամիջյան խնդիրները, սակայն զգալի առաջընթաց քայլ եղավ՝ նպաստելով ազգամիջյան հարաբերություններում անդորրի ստեղծմանը:

[1] Տե՛ս ՀԳԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.2, գ.9, թ 2:

Нарек Мурадян, Формирование Закавказской Федерации и Армения, - Федерация имела важное значение не только для всего региона, но и для вошедших в ее состав 3 государств с точки зрения комплексного развития. Формирование Закавказской Федерации способствовала стабилизации политической жизни в регионе. Цепь создания Закавказской федерации, конечно, с одной стороны лишить независимости 3 республик которые вошли в ее состав, но с другой стороны она регулировала отношения межу 3 республиками, решала возникшие между ними проблемы и все это происходило под руководством Сотеской России. Создаие федерации не решило полностью межгосударственные и международные проблемы, но в тоже время это было огромным шагом вперед способствуя созданию спокойствия в межрасовых отношениях.

Narek Muradyan, Formation of Transcaucasian Federation and Armenia, - Formation of Transcaucasian Federation plays important not only for the whole region, but also for the 3 republics, which entered into the federation from the comprehensive point of view. Formation of Transcaucasian Federation contributed to the stable political life in the region. The goal of the creation of the federation of course is to deprive the independence of the three republics, solve the problems, which may arise between them and which took place under the guidance of the Soviet Russia. Creation of the Federation didn’t fully solve the problems, which existed between the republics as well as international problems, but at the same time it plays a great role for the creation of peace in the interracial relations.

Նարեկ Մուրադյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: